Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1023-16.11.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

<ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության (1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107) օրենքի տեքստում <Հայաստանի Հանրապետության հարկային տեսչություն>, <հարկային տեսչություն>, <հարկային տեսչության մարմիններ> բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել <հարկային մարմին> բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածում <Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը> բառերը փոխարինել <մաքսային մարմինը> բառերով:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածում <ցուցանիշների> բառից հետո շարադրել հետյալ խմբագրությամբ.

<հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի կամ
օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա>:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածի 3-7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքը լրացնել նոր 30.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

<ՀՈԴՎԱԾ 30.2

Գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝հարկային պարտավորությունների չափով:

Չկատարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում հարկային մարմնի ղեկավարը օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակել:

Գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելադրման ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Գույքի արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի նկատմամբ օրենքով բռնագանձում չի կարող տարածվել կամ որի պահպանման ժամկետը արգելադրման պահին պակաս է մեկ տարուց: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, այդ թվում՝ կենսաթոշակային

հիմնադարամների և ապահովագրական /վերապահովագրական/ ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա :

Գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարը հանձնարարագիր է հրապարակում: Արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են հանձնարարագիր հրապարակող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, հանձարարագրի տրման տարին, ամիսը, ամսաթիվը, արգելանք դնող մարմնի անվանումը, գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, հարկ վճարողի անվանումը, ՀՎՀՀ-ն, չկատարված պարտավորության չափը, և արգելանք դնելու իրավական հիմքերը: Արգելանք դնելիս հանձնարարագրի պատճեն ներկայացվում է հարկ վճարողին:

Հարկ վճարողի գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա հրապարակումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին ընդունում է որոշում, որտեղ պետք է նշվեն որոշումն ընդունելու ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, ընդունված որոշման հիմքերը՝ այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը:

Գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը կազմում է համապատասխան արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձևը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

Արգելանք դնելիս այն իրականացնող պաշտոնատար անձը յուրաքանչյուր դեպքի համար որոշում է սահմանափակման տեսակները, ծավալները՝ հաշվի առնելով գույքի հատկանիշները, սեփականատիրոջ կամ տիրապետողի համար դրա նշանակությունը և պարտավորության չափը: Որպես գույքի արժեք՝ ընդունվում է գույքի հաշվեկշռային արժեքը :

Միաժամանակ հարկ վճարողը զգուշացվում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերն վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու քաղաքացիների համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Որոշման պատճենը, ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկվում է հարկ վճարողին, ինչպես նաև այլ անձանց ու մարմիններ:

Գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը չի կարող արգելել հարկ վճարողի ներկայացուցչի մասնակցությունը գույքի արգելադրմանը: Սույն հոդվածի իմաստով հարկ վճարողի ներկայացուցիչ է համարվում այն անձը, ում լիազորությունները հաստատվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Գույքի արգելադրում կարող է իրականացվել ժամը 08.00-ից մինչև 18.00-ն:

Սույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության ոչ պակաս քան քսան տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարը իրավունք ունի մնացած պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքել պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել 2 ամսից մինչև 6 ամիս ժամկետով: Ընդ որում, եթե արգելադրման ընթացքում հարկ վճարողը դիմում է ժամանակացույց կնքելու համար և ներկայացնում է բավարար

հիմքեր այն մասին, որ արգելանքի կիրառումը ակնհայտորեն վտանգում է իր գործունեությունը, ապա հարկային մարմնի ղեկավարը հարկ վճարողի հետ կնքում է պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց: Սույն մասով նախատեսված ժամանակացույց կնքելու լիազորությունը հարկային մարմնի ղեկավարը կարող է փոխանցել հարկային մարմնի այլ պաշտոնատար անձի:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության դադարման, արգելանք դնելուց հետո 1-ամսյա ժամկետում հարկային մարմնի կողմից պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացվելու կամ հարկ վճարողի հետ սույն հոդվածում նշված պարտավորությունը մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերում գույքի արգելադրման մասին որոշումն համարվում է ուժը կորցրած:

Գույքն արգելանքի վերցնելու մասին որոշման վարչական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

Արգելանքի վերցված գույքի վատնելը, օտարելը, թաքցնելը, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը, փչացնելը կամ ոչնչացնելն արգելվում է:

Արգելանքն իրականացնող պաշտոնատար անձն արգելանքի տակ դրված գույքն ի պահ է հանձնում հարկ վճարողին՝ ստացականով, իսկ եթե հարկ վճարողը փորձում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերն վատնել, թաքցնել, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա գույքի պահատվությունը հանձնվում է նման գործունեություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա: Պահատվության հետ կապված ծախսերը կատարում է հարկ վճարողը:

Հարկ վճարողի գույքի արգելադրում իրականացնող պաշտոնատար անձի գործողություններին խոչընդոտելու դեպքում արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը խոչընդոտող հանգամանքները վերացնելու համար աջակցություն ստանալու նպատակով դիմում է իրավապահ մարմիններին և նրանց օժանդակությամբ շարունակում գույքի արգելադրման գործողությունները:

Հարկ վճարողի չկատարված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերել հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարները ուղղել հարկ վճարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման ապահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ ապառքը և դրա նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման ժամկետները՝ կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ :

Որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով : Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:>:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Հարկային մարմնի կամ հարկային ծառայողների գործողությունները և անգործությունը բողոքարկվելու դեպքում ներկայացված բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումներ են կայացվում <<Հարկային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով>:

Հոդված 7. Օրենքի 37-րդ հոդվածում <գանգատարկումը> բառը փոխարինել <բողոքարկումը> բառով, <գանգատ> բառը համապատասխան հոլովառությամբ փոխարինել <բողոք> բառով և <հարկային տեսչության վերադաս> բառերը փոխարինել <վերադաս հարկային> բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

<Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ ԱԺ պատգամավորներ Հակոբ Հակոբյանի Գոհար Ենոքյանի Արա Նռանյանի Արծվիկ Մինասյանի	1. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում <հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ> արտահայտությունը փոխարինել <երեք միլիոն կամ ավելի դրամ> արտահայտությունով.	Ներկայացված առաջարկությունը ընդունելու դեպքում կխաթարվի արգելանքի կիրառման սկզբունքը, քանի որ արգելանքի կիրառումը պայմանավորված է հարկային պարտավորությունների կատարման ապահովման օպերատիվ և արագ իրականացման անհրաժեշտության հանգամանքով և չկատարված պարտավորության շեմի բարձրացման պայմաններում առավել անհիրատեսական կլինի դրանց հետագա կատարման հնարավորությունը, ավելին, առաջարկությունը որևէ կերպ հիմնավորված չէ.
	2. Նախագծի 5-րդ հոդվածին 4-րդ մասում պարզ չէ, թե ով պետք է հանդիսանա <արգելանք դնող մարմինը>, <արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը> վերջիններս հարկային մարմնի հարկային մարմնի կազմի մեջ են մտնելու, թե կատարվելու է ԴԱՀԿ ծառայության կողմից.	Օրենքը կարգավորում է հարկային մարմնի կողմից իրականացվող արգելանքի հարաբերությունները: Մասնավորապես՝ նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն <Գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից

		իրականացվող գործողություն է:>
	3. Նախագծի 5-րդ հոդվածի 16-րդ մասը տեղին չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի արդեն իսկ սահմանված են արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու համար պատասխանատվության միջոցները: Ուղղակի անհրաժեշտ է գործող քրեական օրենգրքի հոդվածի մասին ծանուցել հարկ վճարողին, որը նախատեսված է նախագծի 5-րդ հոդվածի 8-րդ մասով.	Մոտեցումը ընդունելի է, Նախագծով հենց նման զգուշացումն է նախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված գործողությունների կատարման թվարկումով: Բացի այդ, առաջարկվող փոփոխությունը նպատակ ունի խուսափել քրեական օրենսգրքի տարաբնույթ մեկնաբանություններից, քանի որ որոշ դեպքերում վիճարկվում է վարչական կարգով կիրառված արգելանքի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 245 հոդվածի դիսպոզիցիայում թվարկված արարքների կատարման դեպքում քրեական պատասխանատվություն առաջանալու հանգամանքը:
	4. Նախագծի 5-րդ հոդվածը առաջարկվում է լրացնել նոր մասով, հետևյալ բովանդակությամբ. <<Հարկ վճարողի կողմից չկատարված պարտավորությունը մարելու դեպքում հարկային մարմինը 3-օրյա ժամկետում հանում է արգելանքը>>.	Մոտեցումը ընդունելի է և նորմը ամրագրված է նախագծի 5-րդ հոդվածի 13-րդ մասում, որտեղ ի թիվս արգելանք դնելու մասին որոշման ուժը կորցրած ճանաչելու դեպքերի, ներառված է նաև առաջարկվող պայմանը, մասնավորապես՝ <<Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության դադարման, արգելանք դնելուց հետո 1-ամսյա ժամկետում հարկային մարմնի կողմից պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացվելու կամ հարկ վճարողի հետ սույն հոդվածում նշված պարտավորությունը

		մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերում գույքի արգելադրման մասին որոշումն համարվում է ուժը կորցրած>:
	5. Նախագծի 5-րդ հոդվածը առաջարկվում է լրացնել նոր մասերով, հետևյալ բովանդակությամբ. <<Հարկ վճարողի գույքի վրա արգելանք չի դրվում, եթե հարկ վճարողն ունի գերավճարներ, որոնք գերազանցում են նրա կողմից չկատարված հարկային պարտավորությունների չափը /ներառյալ ապառքը և դրա նկատմամբ հաշվարկված << օրենսդրության սահմանված կարգով հաշվարկված տույժերը/. <Եթե հարկ վճարողի ապառքը մեծ է գերավճարից, ապա արգելանք կարող է դրվել միայն ապառքի և գերավճարի տարբերության արժեքով հաշվարկված գույքի համապատասխան մասի նկատմամբ>:	Մոտեցումը ընդունելի է Նախագծով կարգավորվող արգելանքը կիրառվում է հարկային պարտավորությունների առկայության դեպքում, ինչը կարող է արձանագրված լինել կամ հարկ վճարողի կողմից ներկայացվող հաշվարկում կամ հարկային մարմնի կողմից ստուգման ակտով առաջադրվող պարտավորությունների հիմքով: Իսկ գերավճարի առկայության փաստը հաստատվելուց հետո դրանք հաշվանցվում են նաև հարկային պարտավորությունները մարմանը, ինչի արդյունքում պարտավորությունները կդադարեն և արգելանք կիրառելու հիմքերը կվերանան: Հետևաբար առաջարկությունը բովանդակային առումով արդեն իսկ նախատեսված է հարկային վարչարարությունը կարգավորող իրավական ակտերով:
	6. Նախագծի 5-րդ հոդվածը առաջարկվում է լրացնել նոր մասով, հետևյալ բովանդակությամբ. Գույքի արժեքի համար հիմք է հանդիսանում գույքի հաշվեկշռային արժեքը կամ անկախ գնահատողի կողմից կողմից տրված եզրակացությունը>.	Ընդունվել է մասնակի,կատարվել է համապատասխան լրացում նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մասը լրացվել հետևյալ

		բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ <Որպես գույքի արժեք՝ ընդունվում է գույքի հաշվեկշռային արժեքը >: Անկախ գնահատողի կողմից տրված եզրակացությունը հիմք ընդունելու պարագայում ժամանակային առումով չի կարող համատեղվել հարկային մարմնի կողմից արգելանքի կիրառման գործընթացը օպերատիվության ձևաչափի հետ:
	7. Առաջարկվում է հստակեցնել նախագծով առաջարկվող կետերը և մշակել այնպիսի մեխանիզմ, որպեսզի գույքի վրա արգելանք դրվի միայն այն մասով, որի արժեքը համարժեք է չկատարված պարտավորություններին.	Մոտեցումը ընդունելի է Նախագծով արդեն իսկ սահմանված է առաջարկվող սկզբունքը. <Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝ հարկային պարտավորությունների չափով>:
ՀՀ կառավարություն	1.Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել << Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, այդ թվում՝ կենսաթոշակային հիմնադարամների և ապահովագրական /վերապահովագրական/ ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա :>> նախադասությունով:	Ընդունվել է, նախագիծը լրամշալվել է:
	2. Նախագծի 5-րդ մասի վերջին պարբերությունը լրացնել << Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:>> նախադասությունով:	Ընդունվել է, նախագիծը լրամշալվել է: